ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 71 30 ապրիլի 2021թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Խաչատրյանին

Կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ղեկավարի թիվ 07 որոշումը:
Առդիր 1 էջ:

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ
Քարաձոր համայնք փողոց 1 շենք 13

ՈՐՈՇՈՒՄ թիվ 07
27 ապրիլի 2021 թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ, 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով որակավորված անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը և հիմք ընդունելով քաղաքացի Արաքսի Առաքելյանի ներկայացուցչի դիմումը, դրան կից ներկայացված փաստաթղթերը, համայնքապետարանում պահպանվող՝ հողամասի հատկացման ցուցակների և հողի հարկի բազայում առկա տեղեկությունները, հողի սեփականաշնորհման և տեղական հանձնաժողովի որոշումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի տարածքում գտնվող 06-109-0011-0004 ծածկագրի տակ գտնվող 0,10458հա հողամասի հողհատկացման փաստաթղթերի հիմքերը և 0.10458 հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Արաքսի Արարատի Առաքելյանի /09.01.1983թ./ սեփականության իրավունքը

2. ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի տարածքում գտնվող 06-109-0011-0004 ծածկագրով հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

3. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

4. Հողամասում առկա է ինքնակամ կառուցված 87.28քմ մակերեսով կիսակառույցբնակելի տուն:

5. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Քարաձոր համայնք, 5 -րդ փողոց, 27 հողամաս:

6.Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ